

**ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՆ ԿԱՍ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ
ՎՆԱՍՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԵՎ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ**

ՈՐՈՇՈՒՄ

«06» օգոստոս 2018թ. թիվ 24

ՀԱՏՈՒՑՄԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «գ» ենթակետը, 2-րդ մասի 2-րդ կետը, 5-րդ հոդվածի 2-րդ մասը, Զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 02.03.2017թ. թիվ 5 որոշմամբ հաստատված Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովի կազմման և գործունեության կարգի 10.3-րդ կետը, Զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 02.03.2017թ. թիվ 9 որոշմամբ հաստատված Հատուցման գումարների վճարման կարգը, Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովի 06.08.2018թ. նիստի թիվ 8 արձանագրությունը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունից 03.08.2018թ. ստացված փաստաթղթերը և ԲՍՓՀ 17.07.2018թ. բժշկասոցիալական փորձաքննական թիվ 1361064 որոշումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Երկրորդ խմբի հաշմանդամ ժամկետային պարտադիր զինծառայող շարքային Բաբկեն Էդուարդի Սիմոնյանին վճարել Օրենքով սահմանված հատուցման գումարը՝ 29.000.000 ՀՀ դրամը, որից 5.000.000 ՀՀ դրամը միանվագ, իսկ մնացած գումարը՝ ամսական 100.000 ՀՀ դրամի չափով 20 տարվա ընթացքում:
2. Սահմանել, որ Բաբկեն Էդուարդի Սիմոնյանին սույն որոշման 1-ին կետում նշված ամսական վճարումների կատարումը սկսել 2018 թվականի հուլիս ամսվանից և սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 3-օրյա ժամկետում վերջինիս փոխանցել 2018 թվականի հուլիս և օգոստոս ամիսների համար սահմանված վճարները՝ ընդհանուր 200.000 ՀՀ դրամ գումարի չափով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Հանձնաժողովի նախագահ՝

Վարուժան Ավետիքյան